ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906,
norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 հունվարի 2020 թվականի N 6

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2020 թվականի հունվարի 31-ի N 2 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
2. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին
3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը քաղաքացի Մանյակ Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի հետ փոխանակելու մասին
4. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ու շինությունները օտարելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը հաստատելու մասին
6. Նոր Գեղի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 86 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 77 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան			
Վանիկ Ավալյան			
Արմեն Բաբախանյան			
Վահագ Գևորգյան			
Գագիկ Գևորգյան			
Վլադիկ Գրիգորյան			
Մանյա Կիրակոսյան			
Շիրալի Մամոյան			
Նաթելա Շմավոնյան			
Մարիա Մկրտչյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906,
norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 հունվարի 2020 թվականի N 7

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի պահանջներով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արիստակես Ղազարյանի կողմից 2019 թվականի դեկտեմբերի 9-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում գտնվող 07-048-0036-0002 կադաստրային համարի 425.4, քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, համայնքի ավագանին որոշում է՝

1. Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում գտնվող 07-048-0036-0002 կադաստրային համարի 425,4 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան			
Վանիկ Ավալյան			
Արմեն Բաբախանյան			
Վահագ Գևորգյան			
Գագիկ Գևորգյան			
Վլադիկ Գրիգորյան			
Մանյա Կիրակոսյան			
Շիրալի Մամոյան			
Նաթելա Շմավոնյան			
Մարիա Մկրտչյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906,
norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2020 թվականի N 8

ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի պահանջներով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արիստակես Ղազարյանի կողմից 2019 թվականի դեկտեմբերի12-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում գտնվող 07-048-0099-0002 կադաստրային համարի 31.5, քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ, համայնքի ավագանին որոշում է.

1. Ճանաչել համայնքային սեփականության իրավունքը Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում գտնվող 07-048-0099-0002 կադաստրային համարի 31,5 քառ.մետր մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողակտորի նկատմամբ:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կատարելու վերը նշված հողամասի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան			
Վանիկ Ավալյան			
Արմեն Բաբախանյան			
Վահագ Գևորգյան			
Գագիկ Գևորգյան			
Վլադիկ Գրիգորյան			
Մանյա Կիրակոսյան			
Շիրալի Մամոյան			
Նաթելա Ծմավոնյան			
Մարիա Մկրտչյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2020 թվականի N 9

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԱՆՅԱԿ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի և Հայաստանի հանարապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի 286-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 6-րդ գլխի 29-րդ կետի պահանջներով. համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող Ֆրոնտիկ Թևոսյան փողոց 44 (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0065-0198) հասցեի 0,003 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատարածքը փոխանակել Մանյակ Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող Ուսանողական փողոց 72/17 (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0059-0091) հասցեի 0.0021 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատարածքի հետ:

2.Պարտավորեցնել Մանյակ Բաբայանին հողամասերիի կադաստրային արժեքի տարբերությունը (0,0009 հա մակերեսի համար կազմում է 26460 դրամ) մուծել Նոր Գեղիի համայնքապետարանի հետևյալ հաշվեհամարին 900115104128:

2.Հողամասի փոխանակման պայմանագրի նոտարական վավերացման և գույքի պետական գրանցում կատարելու հետ կապված ծախսերը կկատարվի համայնքապետարանի հաշվին:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան			
Վանիկ Ավալյան			
Արմեն Բաբախանյան			
Վահագ Գևորգյան			
Գագիկ Գևորգյան			
Վլադիկ Գրիգորյան			
Մանյա Կիրակոսյան			
Շիրալի Մամոյան			
Նաթելա Շմավոնյան			
Մարիա Մկրտչյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906,
norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 հունվարի 2020 թվականի N 10

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և ՀՀ կառավարության 2006 թվականիմայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ ուղղակի վաճառքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղ Նոր Գեղի Ֆրոնտիկ Թևոսյան փողոց 225/14 (կադաստրային ծածկագիր՝ 07-048-0038-0102) հասցեում գտնվող 0,005984 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը, նրա վրա գտնվող 38քմ (արտաքին մակերես՝ 38քմ) մակերեսով հասարակական շինությունը և 18,34 քմ մակերեսով ծածկը՝ կառուցապատող Հովհաննես Բաղդասարյանին:
2. Հողամասը և շինությունները օտարել ինքնակամ կառույցն իրականացնողին 1 240638 (մեկ միլիոն երկու հարյուր քառասուն հազար վեց հարյուր երեսունութ) դրամ գնով, որից՝ հողամասի արժեք՝ 175812 (մեկ հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր տասներկու) դրամ, շինության համար՝ 1064826 (մեկ միլիոն վաթսունչորս հազար ութ հարյուր քսանվեց) դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան			
Վանիկ Ավալյան			
Արմեն Բաբախանյան			
Վահագ Գևորգյան			
Գագիկ Գևորգյան			
Վլադիկ Գրիգորյան			
Մանյա Կիրակոսյան			
Շիրալի Մամոյան			
Նաթելա Շմավոնյան			
Մարիա Մկրտչյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրունտիկ Թևոսյանի 64,094900906, norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2020 թվականի N 11-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Նոր Գեղի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 20-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 5-րդ կետը և հավելված N 2-ի 4-րդ կետը, հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը և համայնքի ղեկավարի կողմից համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովելու նպատակով՝ Նոր Գեղի համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան			
Վանիկ Ավալյան			
Արմեն Բաբախանյան			
Վահագ Գևորգյան			
Գագիկ Գևորգյան			
Վլադիկ Գրիգորյան			
Մանյա Կիրակոսյան			
Շիրալի Մամոյան			
Նաթելա Շմավոնյան			
Մարիա Մկրտչյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

Հավելված

Նոր Գեղի համայնքի ավագանու

2020 թվականի հունվարի 31-ի N 11-Ն որոշման

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Նոր Գեղի համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարին վերապահված իրավունքների շրջանակներում, նրա կողմից տեղական վճարների դրույքաչափի, մասնավորապես՝ նախադպրոցական և արտադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (այսուհետ՝ ՀՈԱԿ) մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նվազեցման արտոնություն (այսուհետ՝ արտոնություն) կիրառելու կարգը, արտոնություն կիրառելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, արտոնության տրամադրման ամփոփոթերթիկի ձևը (Ձև 1):

2. Համայնքի ղեկավարը ստեղծում է Նոր Գեղի համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով:

3. Հանձնաժողովում ընդգրկվում են՝

1) համայնքի ավագանու մեկ անդամ,

2)Նոր Գեղիի համայնքապետարանի աշխատակազմից սոցիալական գործառույթներն իրականացնող մեկ աշխատող,

3)Նոր Գեղիի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի գործառույթներն իրականացնող մեկ աշխատող:

4.Հանձնաժողովում կարող են ընդգրկվել այդպիսի ցանկություն հայտնած՝ համայնքի մինչև երկու շահագրգիռ քաղաքացի:

5.Համայնքի ղեկավարը նշանակում է հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

6. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է սույն կարգով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

7. Նոր Գեղիի համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը և ՀՈԱԿ-ների տնօրենները՝ անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

8. Համայնքի ղեկավարը տեղական վճարների նվազեցման արտոնությունը կիրառում է դրույքաչափի 50-ի տոկոսի չափով՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

9. Արտոնությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.

1) երեխաների ծնողները (օրինական ներկայացուցիչները),

2) ՀՈԱԿ-ների տնօրենները,

3) այլ շահագրգիռ հասարակական կազմակերպությունները:

ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

10. Արտոնության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթում ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում կամ գրություն (այսուհետ՝ հայտ),

2) երեխայի, ծնողների (կամ օրինական ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթերի պատճենները,

3)տեղեկանք ՀՈԱԿ-ից, որտեղ հաճախում է երեխան (կամ երեխաները), անհրաժեշտության դեպքում՝ երեխայի բնութագիրը,

4) հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ (եթե երեխան կամ ծնողը հաշմանդամ է),

5) ընտանիքի սոցիալական կարգավիճակը հավաստող այլ անհրաժեշտ փաստաթղթեր (ծնողի մահվան վկայականի պատճենը, բազմազավակ ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները,

6) տեղեկանք երեխայի բնակության վայրի մասին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

11. Հայտը ստանալուց հետո մեկ շաբաթյա ժամկետում հանձնաժողովի քարտուղարը արհրաժեշտ փաստաթղթերը և լրացված արտոնության տրամադրման ամփոփոթերթիկը ներկայացնում է հանձնաժողովի քննարկմանը:

12. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կատարվում է տնայց, ընտանիքի կարիքների գնահատում, դիմողի հետ անհատական հանդիպում:

13. Հայտերի քննարկման արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն:

14. Հանձնաժողովի նիստում հայտերի քննարկման մասին արձանագրությունը հանձնաժողովի նախագահը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ արտոնություն կիրառելու որոշում կայացնելու համար:

15. Հանձնաժողովի քարտուղարը ապահովում է փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանումը:

Ձև 1

ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

Նոր Գեղի համայնք «----» ---------- 20------թ.

Ընդհանուր տվյալներ

Երեխայի անուն, ազգանուն, հայրանուն

Հասցե

Հեռախոս

Դիմողը

N	Արտոնության տրամադրման	
	հիմքը	Չափը
1.		
2.		
3.		
....		

Արտոնությունը հիմնավորող փաստաթղթերի ցանկը՝

- ---
- ---
- ---
- ---
- ---
- ---

Լրացուցիչ տեղեկատվություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՊԱՊՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906,
norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 հունվարի 2020 թվականի N 12

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 86 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Ուժը կորցրած ճանաչել Նոր Գեղի համայնքի ավագանու 2016 թվական դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Համայնքների միություն» իրավաբանական անձանց միությանը անդամակցելու մասին» N 86 որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան		
Վանիկ Ավալյան		
Արմեն Բաբախանյան		
Վահագ Գևորգյան		
Գագիկ Գևորգյան		
Վլադիկ Գրիգորյան		
Մանյա Կիրակոսյան		
Շիրալի Մամոյան		
Նաթելա Ծմավոնյան		
Մարիա Մկրտչյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյանի 64,094900906,
norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2020 թվականի N 13

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 77 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի << Նոր Գեղի համայնքի բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 77 որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N 1 հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

	կողմ (9)	դեմ (0)	ձեռնպահ (0)
Սամվել Ալեքսանյան			
Վանիկ Ավալյան			
Արմեն Բաբախանյան			
Վահագ Գևորգյան			
Գագիկ Գևորգյան			
Վլադիկ Գրիգորյան			
Մանյա Կիրակոսյան			
Շիրալի Մամոյան			
Նաթելա Շմավոնյան			
Մարիա Մկրտչյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

Հավելված N 1
Նոր Գեղի համայնքի ավագանու
2020 թվականի հունվարի 31-ի N 12 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Կոտայքի մարզի Նոր Գեղիի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ **11**

Հ/h	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	<<Կոտայքի մարզի Նոր Գեղիի կոմունալ սպասարկում և բարեկարգում>> ՀՈԱԿ	տնօրեն			1	150000			150000
2		հաշվապահ			1	120000			120000
4		վարորդ			1	140000			140000
5		վարորդ			1	100000			100000
6		բանվոր			4	120000			480000
7		բանվոր			1	140000			140000
8		բանվոր			2	93000			186000
		Ընդամենը			11	863000			1316000